անկիւնում մի մի կարմիր գնդակով: Այսեան կողքից պայմանական ծառ պտուղներով:

«Կանոն առաջին յորս ածան չորեքին» գրուած է երեքքառորդական բոլորակի մէջ. կամարի զարդը ծիածանի բեկուած ճառագայթներ. ճակատի կեդրոնում անօթի երկու կողմից մի մի կաքաւանման թռչուն, պարանոցները, թեւերը մէջքի վերայից և պոչի մօտ մանեկաւորած: Լիւնետի վերայ քառանկիւնի խորանի անկիւններում մի մի մեծ երկրաչափական հիւսկէն վարդեակ, նրանց մէջտեղը եւ ներքեւի անկիւններում մի մի փոքրիկ վարդեակ ութ ճառագայթի խաչաձեւով. համաբարբառը երեք սիւներով. ձախ կողմից ներքեւում պայմանական մի ծառ լուսանցքում: Ճիշդ սորա նման է «կանոն երկրորդ յորս երեքն» միայն խորանը չորս սիւների վրայ, եւ տախտակի վրայ ձախ



Պատկ. 15